ԱՏԱՆԱՅԻ ԵՂԵՌՆԸ

ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԷՏԻՐՆԷԻ ԵՐԵՍՓՈԽԱՆ ՅԱԿՈԲ ՊԱՊԻԿԵԱՆԻ

«Արդարութիւնը կը բարձրացնէ ազգերը, եւ մեղքն ու ոճիրը կը կործանեն զայն»:

ՍՈՂՈՄՈՆ

Թողած ըլլալով Պոլիսը 12 Մայիսին, մենք, Ֆայիգ պէյ (Պետական Խորհրդոյ Նախադատ Ատեանի Նախագահ) և Յարութիւն էֆ. Մոսդիչեան (Մանաստըրի վիլայէթին Դատական Քննիչ)՝ պատուիրակներ Բ. Դրան, երեսփոխան Եուսուֆ Քէմալ պէյ և ես՝ պատգամաւորներ Օսմ. Խորհրդարանի, 16ին հասանք Ադանա, այդ քաղաքին և իր շրջականներու մէջ տեղի ունեցած արիւնալի պատահարներուն, — որոնք արտմեցուցած են բոլոր օսմանցիները — պատճառները և նկարագիրը ճշտելու և ճշմարտութիւնը ճանչցնելու պաշտօնով։

Մեկնելու առեն կը մտածէի որ այս ցաւալի եղելութիւններու վերաբերեալ լուրերը շատ չափազանցուած էին, և խիստ կը փափաքէի զոր այնպէս ըլլար, վասնզի հին վարչութեան օրով, առանց ոչ մէկ պատճառի, հարիւր հազարաւոր անմեղ Հայերու արիւնը դեռ չէր չորցած, և այս խեղճ զոհերու անմեղութիւնն ալ վերջապէս երեւան ելած ըլլալով, մեր միութեան